«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ

Առարկան՝ ԴԱՍՎԱՐ

Հետազոտող ուսուցիչ՝ ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Ուսումնական հաստատություն՝ Ք. ՄԱՍԻՍ Մ.ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2022

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ

1. Ինչպե՞ս հաղթահարել վաղ տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության խնդիրները:
2. Ինչպե՞ս կազմակերպել 6 տարեկան երեխաների ուսումնական գործընթացը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

ԳԼՈՒԽ 1. ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ……6

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……..12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……23

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……24

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……...25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տարրական դասարանների կարդալու նախնական կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են հետևողական և տևական վարժությունները, որոնք կարևորագույն նախապայման են դառնում երեխայի մտավոր զարգացման և հետագա կրթության համար: Վերջին տարիներին, կապված վաղ ուսուցման ներմուծման հետ, կարևորվում է խաղային գործոնի դերը ուսուցման գործընթացում, որով կարելի է մոտիվացնել 6 տարեկան երեխային և իրականացնել աշակերտակենտրոն ուսուցում: Խաղային գործընթացը մեծապես նպաստում է, որ աշակերտը հեշտությամբ հաղթահարի տարիքային ճգնաժամը, ուսուցման գործընթացում առաջացած դժվարությունները, և նրա մոտ ձևավորվի սեր դեպի ուսումը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության կազմակերպման խնդիրների լուծման և մասնավորապես կարդալու նախնական կարողության ձևավորման ժամանակ ծագող դժվարությունների հաղթա- հարման գործընթացում նորանոր, ավելի արդյունավետ ճանապարհների ու եղանակների մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նորույթը: կարդալու նախնական կարողության ձևավորման դժվարությունների հաղթահարման նպատակով վերլուծական-համադրական հնչույթավանկային մեթոդի հիման վրա խաղ- վարժությունների մշակումն է և դրանց կիրառման արդյունքների վերլուծությունը:

Հետազոտության նպատակն է վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության կազմակերպման խնդիրների և հատկապես կարդալու նախնական կարողության ձևավորման դժվարությունների հաղթահարմանը նպաստող մեթոդական հնարների ուսումնասիրումը և դրանց հիման վրա խաղ- վարժությունների և ուղղորդող առաջարկությունների մշակումն է:

Այս նպատակով մեր աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել հետազոտության հիմնախնդրին առնչվող առկա

մասնագիտական գրականությունը և քննարկել հիմնական սկզբունքները.

2. դիտարկել մայրենիի առաջին դասարանի առարկայական ծրագիրը և այբբենարանը, դրանք քննել հիմնախնդրի տեսանկյունից.

3 . իրականացնել դասալսումներ, ինչպես նաև հաշվի առնել դասարանում առաջացած խնդիրները, դրանք քննարկել ուսումնասիրության թեմայի տեսանկյունից.

4 . մշակել և փորձարկել վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության երեք փուլերի նպատակներն ու առանձնահատկությունները և յուրաքանչյուր փուլում հատկապես կարդալու կարողության ձևաորմանն ուղղված խնդիրների հաջորդային կապը և հիմավորել.

5. ամփոփել ուսումնասիրության արդյունքները, մշակել կարդալու նախնական կարողության ձևավորման ժամանակ ծագող դժվարությունների հաղթահարման մեթոդական որոշակի հնարներ և խաղ-վարժանքների համալիրը:

Ուսումնասիրության մեթոդներն են՝գիտամեթոդական գրականության ուսումնասիրու- թյունը և վերլուծությունը, հարցախույզը և դրա արդյունքների վերլուծությունը, աշակերտների հետ անհատական աշխատանքների վարումը /նաև առցանց հարթակում/ և կատարված աշխատանքների վերլուծությունը, ձեռք բերված տվյալների վիճակագրական վերլուծությունը

Գրաճանաչության փուլում կարդալու նախնական կարողության ձևավորման ընթացքում ծագած դժվարությունների հաղթահարմանն ուղղված առաջադրանքների կատարման արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա պատկերացնելու վերլուծական-համադրական հնչույթա- բառային մեթոդի շրջանակում կարդալու դժվարությունների հաղթահարման տեսական հիմքերը

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Վեց տարեկան երեխայի տարիքային առանձնահատկությունների հաշվառումը գրաճանաչության կազմակերպման ընթացքում:

Վաղ տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության խնդիրները մշտապես եղել են հոգեբանների և մանկավարժների ուշադրության կենտրոնում: Վաղ տարիքը երեխայի ամենակարևոր շրջաններից մեկն է, որի նշանակությունն անգնահատելի է նրա հետագա լիարժեք զարգացման համար: Այդ տարիքում տեղի է ունենում մարդուն բնորոշ բոլոր հոգեֆիզիոլոգիական գործընթացների բուռն զարգացումը, ձևա- վորվում են սոցիալական վարքի առաջին դրսևորումները, ձեռք են բերվում անձնային հատկություններ, որոնք ենթակա են զարգացման հետագա տարիքային փուլերում: Զ.Ֆրոյդը համեմատում է վաղ տարիքի դերը մարդու կյանքում ինքնաթիռի թռիչքի հետ՝ նշելով, որ ինչպես ինքնաթիռը հաջող վայրէջք կատարել չի կարող, եթե վեր սլացքն անհաջող է, այնպես էլ երեխայի զարգացման առաջընթացը պայմանավորված է վաղ տարիքի հաջողություններով: Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են 6 տարեկան երեխաներին:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 6 տարեկաններն <<ապրում են տարիքային ճգնաժամ, որի ժամանակ նրանց մեջ ընդգծված են դառնում հակասության ոգին, կամակորությունը, անբավարարվածությունը, <<Ես ինքս>> դիրքորոշումը, ըմբոստությունը, խանդը (ուսուցչի, ծնողի, մտերիմ ընկերների նկատմամբ)>>:

Ա.Կազմաբանախոսական առանձնահատկություններ

Դպրոց ընդունվող ու տարիքի երեխայի մեջ նկատվում է օրգանիզմի բուռն զարգացում: Դրանով իսկ պայմանավորված՝ երեխան աստիճանաբար ձեռք է բերում իր ուժերին և կարողություններին համապատասխան ծանրաբեռնվածություն, որը դպրոցին պատրաստ լինելու կարևոր պայմաններից է: Տարիքային այս հատվածը բնութագրվում էիբրև ճգնաժամային և աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ:

Նախկինում ճգնաժամային էր համարվում յոթերորդ տարին, սակայն այժմ իջել էմինչև 6 տարեկանը, ինչը պայմանավորված է հասարակության կյանքում սոցիալ-տնտեսական և մշակույթային պայմանների փոփոխությամբ:

Լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, մասնավորապես գլխուղեղում: Ըստ գիտնականների ուսումնասիրությունների՝ 6 տարեկան երեխայի գլխուղեղի և նրա ենթակեղևի (որտեղ ստեղծված են նյարդային բջիջները) քաշը հասնում է մեծ մարդու գլխուղեղի քաշի 90 տոկոսին: Այդ է պատճառը, որ տարիքին համապատասխան՝ ծանրաբեռնվածությունը կազդի ուսումնական գործունեության արդյունավետության և առողջության վրա:

Այս տարիքում լավ զարգացած է երեխայի հենաշարժողական համակարգը: Ոսկրացման գործընթացը ավարտված չի համարվում, կատարյալ չի սիրտ-թոքային գործունեությունը, այս է պատճառը, որ երեխայի նուրբ օրգանիզմը կարող է խեղվել, սխալ նստելու հետևանքով կծռվի ողնաշարը, կրծքավանդակը կսեղմվի և այլն:

Այս տարիքում բավարար չափով զարգացած են վերջույթների մեծ մկանները, ձևավորման փուլում են գտնվում տարածական-տեսողական ընկալման կարողությունը: Աստիճանաբար զարգանում և կատարելագործվում է տեսողությունը, մասնավորապես կատարելության է հասնում երկակնյա տեսողությունը:Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ 6-7 տարեկան երեխային միևնույն գործունեությամբ երակարատև զբաղեցնել չի կարելի: Երկար ժամանակ միևնույն աշխատանքով ծանրաբեռնվելու դեպքում ոչ միայն կընկնի նրանց աշխատանքի արդյունավետությունը, այլև կխաթարվի առողջությունը:

Նախկինում ճգնաժամային էր համարվում յոթերորդ տարին, սակայն այժմ իջել

է մինչև 6 տարեկանը, ինչը պայմանավորված է հասարակության կյանքում սոցիալ տնտեսական և մշակույթային պայմանների փոփոխությամբ:

Լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, մասնավորապես գլխուղեղում: Ըստ գիտնականների ուսումնասիրությունների՝ 6 տարեկան երեխայի գլխուղեղի և նրա ենթակեղևի (որտեղ ստեղծված են նյարդային բջիջները) քաշը հասնում է մեծ մարդու գլխուղեղի քաշի 90 տոկոսին: Այդ է պատճառը, որ տարի- քին համապատասխան՝ ծանրաբեռնվածությունը կազդի ուսումնական գործունեության արդյունավետության և առողջության վրա:

Այս տարիքում լավ զարգացած է երեխայի հենաշարժողական համակարգը: Ոսկրացման գործընթացը ավարտված չի համարվում, կատարյալ չի սիրտ-թոքային գործունեությունը, այս է պատճառը, որ երեխայի նուրբ օրգանիզմը կարող է խեղվել, սխալ նստելու հետևանքով կծռվի ողնաշարը, կրծքավանդակը կսեղմվի և այլն:

Այս տարիքում բավարար չափով զարգացած են վերջույթների մեծ մկանները, ձևավորման փուլում են գտնվում տարածական-տեսողական ընկալման կարողությունը: Աստիճանաբար զարգանում և կատարելագործվում է տեսողությունը, մասնավորապես կատարելության է հասնում երկակնյա տեսողությունը:Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ 6-7 տարեկան երեխային միևնույն գործունեությամբ երակարատև զբաղեցնել չի կարելի: Երկար ժամանակ միևնույն աշխատանքով ծանրաբեռնվելու դեպքում ոչ միայն կընկնի նրանց աշխատանքի արդյունավետությունը, այլև կխաթարվի առողջությունը:

Բ.Հոգեբանական առանձնահատկությունները

Երեխայի հոգեբանական առանձնահատկությունների համալիրն իր մեջ ներառում է անձնային և կամային ոլորտները, գիտելիքների ու պատկերացումների ընդհանրացող, դասդասող պարզ համակարգերը, որոշ ուսումնական ունակություններ և այլն:

Ավագ նախադպրոցական տարիքում սկսում են ձևավորվել երեխայի տարաբնույթ գործունեության և վարքի նոր մեխանիզմներ: Երեխաները տարիքային այս փուլում կամենում են լինել ուշադրության կենտրոնում, ձգտում են լինել առաջինը, հասնել իրենց նպատակին, սկսում են կատարել <<լուրջ>> պարտականություններ:

- Ծագում են գործունեության դրդապատճառային նոր տեսակներ, երեխան յուրացնում է բարեկիրթ վարքի, զարգանում են կամային վարքի հիմքեր, բարոյական նոր- մերի համակարգ իր տարիքին համապատասխան:
- Կյանքի 6-րդ տարվա ավարտին երեխան սկսում է գիտակցել իր տեղը շրջապատում, սկսում է գիտակցել իր հաջողություններն ու անհաջողությունները:
- Բացահայտ է, որ այս տարիքի երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն, ավելի դյուրին են ընկալում այն, ինչը տեսել են, զգացել և կատարել են: Կարևոր է նշել, որ տարիքային այս փուլում երեխան իրականացնում է գործունեության երեք տեսակն էլ (խաղ, աշխատանք, ուսուցում), սակայն առաջատարը խաղային գործունեությունն է, որը պետք է հաշվի առնել ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ:
- Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխա ունի ուսումնական տարբեր, դրդապատճառներ և դժվար է որոշել ու միանշանակ գնահատել դրանք, որովհետև զրույցի ժամանակ երեխաները տալիս են ոչ թե անկեղծ ու ճիշտ պատասխան, այլ խրախուսանք ակնկալող այնպիսի պատասխան, ինչպիսին իրենցից սպասում էին մեծերը:
- Ավագ նախադպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, որի ժամանակ երեխաները սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտա- վոր պարապունքները:
- 6-7 տարեկան երեխաներն իրենց կատարած աշխտանքի գնահատականը (և՛ խոսքային, և՛ բազային) ընկալում են ոչ որպես իրենց գիտելիքների, առաջադրանքի և արարքի արժևորում, այլ որպես իրենց անձի նկատմամբ ուսուցչի ունեցած բացասական կամ դրական վերաբերմունքի արտահայտություն:
- Նրանք լավ են հասկանում անմիջականորեն իրենց (միայն իրենց) ուղղված խոսքը: Հաճախ ամբողջ դասարանին ուղղված հրահանգները, առանձին աշակերտներ չեն գիտակցում, որ դա վերաբերվում է նաև իրենց:
- Եթե 3-4 տարեկան երեխայի համար կարևոր է այն, թե <<ի՛նչ է ինքն անում>>

ապա 6-7 տարեկանների համար կարևոր է նաև <<ինչո՛ւ պիտի դա անի>>, <<ինչպե՛ս պիտի դա անի>> և <<ինչո՛ւ այդպես պիտի անի>>:

- Գիտելիքների ձեռքբերման նախնական փուլում երեխաների մեջ գերիշխում է մեխանիկական հիշողությունը:
- Հայտնի է, որ այս տարիքի երեխաները ունեն կոնկրետ մտածողություն: Հետևաբար պետք է երեխաներին առաջարկել մտածել այն մասին, ինչը հարազատ է իրենց, հատուկ է իրենց տարիքին, պատմել այն մասին, ինչը իրենց հետ տեղի է ունեցել, այլապես նրանք կդժվարանան ըմբռնել ինչպես ուսուցչի խոսքը, այնպես էլ հանձնարարված առաջադրանքների նպատակները, չեն կարողանա ծրագրավորել, թե ինչ հաջորդականությամբ պիտի իրականացվեն հանձնարարությունները:

Գիտելիքների հաղորդման, ամրակայման և ստուգման գործընթացն անհրաժեշտ է իրականացնել՝ օգտագործելով հնարավորինս շատ խաղալիքներ, դիդակտիկ նյութեր, առաջարկել խոսք կառուցել այնպիսի նկարի շուրջ, որոնց բովանդակությունը հոգեհարազատ է երեխաներին, բխում է նրանց կենսափորձից, համապատասխանում է իրականությանը:

Անչափ կարևոր է երեխաների երևակայության թռիչքին ոչ միայն չխոչընդոտելը, այլև դրա արդյունքում նրանց <<ստեղծածին>> հավատալը, նրանց ասածով անկեղծորեն հրճվելը՝ դրանով նպաստելով, որ նրանք էլի ու էլի երևակայեն ու երևակայությունը խոսքով արտահայտեն:

Հաշվի առնելով 6 տարեկանների այս առանձնահատկությունները՝ պետք է ուսուցման գործընթացը կազմակերպել՝ օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները, ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատմասնակից դարձնի:

Այսպիսով՝ մինչև աշակերտը ակտիվ ստեղծագործական գործունեությամբ չմասնակցի գիտելիքների ձեռքբերման գործընթացին (գծել, կտրել, նկարել, կառուցել, ներկել, համեմատել, հակադրել, մտածել, խոսել, դատել, եզրակացնել և այլն) նա չի կարող հասկանալ, մտապահել և իմաստավորել դրանք:

Ուսուցանվող գիտելիքների պաշարի չափավորությունն ու ուսուցման մեթոդ-

ների՝ աշակերտների տարիքին համապատասխանությունը կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության, երեխաների առողջության պահպանման հիմնական գրավականն են:

Այս իմաստով պիտի կարևորել դասի տևողությունը, հաճախակի դասն ընդմիջելով ֆիզկուլտ դադարներով:

Գ. Սոցալիական-անձնական առանձնահատկություններ

Ավագ նախադպրոցականն այլևս դադարում է պարզամիտ և անմիջական լինելուց և շրջապատողների համար դառնում է առավել անհասկանալի:

Երեխաները գիտակցում են իրենց սոցիալական <<ես>>-ը, ձևավորվում է <<ներքին սոցիալական դիրքորոշումը>>, աստիճանաբար ձգտում են իրենց տեղն ու դերն ունենալ միջավայրում, վայելել մեծերի հարգանքը, համակրանքը, ուշադրություն գրավել, աչքի ընկնել և այլն: Նրանք անչափ զգայուն են միջավայրի վերաբերմունքի նկատմամբ, և եթե նրանց ձգտումները չեն իրականանում, առաջանում են ընդվզում և բողոք: Այս տարիքում երեխաները դրսևորում են հակասական վարք (<<երկակի վարք>>). տանը նրանք կամակոր են, անհաշտ, ինքնակամ, իսկ մանկապարտեզում՝ խաղասեր, կազմակերպված և դրսևորում են ինքնուրույնություն:

Դ. Խոսք, խոսքային գործունեության առանձնահատկությունները

Այս իմաստով պիտի կարևորել դասի տևողությունը, հաճախակի դասն ընդմիջելով ֆիզկուլտ դադարներով:

Դ. Խոսք, խոսքային գործունեության առանձնահատկությունները

- Առողջ, նորմալ խոսքային զարգացում ապրող առաջին դասարանցին առանց դժվարությունների հաղորդակցվում է տարեկիցների և մեծերի հետ, հասկանալի, պարզ բառերով և ոչ բարդ լեզվական կառույցներով արտահայտում է իր մտքերն ու ցանկությունները:

- Հիմնականում ձևավորված է լինում խոսքաշարժողական կառույցը, որը լեզվի հնչյունային կողմի բավարար տիրապետման կարևոր նախապայմանն է:

- Բավարար զարգացած են երեխայի խոսքի հնչյունային կազմության ընկալմանը նպաստող այնպիսի որակները, ինչպիսիք են՝ նյարդային համակարգի զգայունությունը, ամեն ինչ ընդօրինակելու ունակությունը, խոսքի, բնության մեջ հնչող հնչյունների նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը: Այս տարիքը մայրենի լեզվի բոլոր հնչյունների ընկալման և վերարտադրման ամենաբարենպաստ շրջանն է:
- Այնուամենայնիվ, կան նաև առողջ երեխաներ, որոնք դեռևս արտաբերման իմաստով չունեն վերջնականապես ձևավորված դժվար հնչյունները վերարտադրելու կարողությունները, հանգամանք, որը պետք է գրավի ուսուցչի ուշադրությունը և նրան ուղղորդի հստակ հնչյունային համակարգային վարժությունների կատարման:

Բավարար զարգացած են երեխայի խոսքի հնչյունային կազմության ընկալմանը նպաստող այնպիսի որակները, ինչպիսիք են՝ նյարդային համակարգի զգայունությունը, ամեն ինչ ընդօրինակելու ունակությունը, խոսքի, բնության մեջ հնչող հնչյունների նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը: Այս տարիքը մայրենի լեզվի բոլոր հնչյունների ընկալման և վերարտադրման ամենաբարենպաստ շրջանն է: Այնուամենայնիվ, կան նաև առողջ երեխաներ, որոնք դեռևս արտաբերման իմաստով չունեն վերջնականապես ձևավորված դժվար հնչյունները վերարտադրելու կարողությունները, հանգամանք, որը պետք է գրավի ուսուցչի ուշադրությունը և նրան ուղղորդի հստակ հնչյունային համակարգային վարժությունների կատարման:

Բուռն զարգացման փուլում են գտնվում նաև ինքնավերահսկման, սեփական արժեքների գիտակցման, խոսքի անկատարության որակները զգալու և արատները շտկելու գործընթացները:

Երեխաներն սկսում են կարևորել ընկերների խոսքը, ընկալել խոսքային հարաբերությունները, մեծերի և հասակակիցների հետ նրանք ազատ ու անկաշկանդ զրույցի են բռնվում, բավականին ճշգրիտ և ամբողջական նախադասություններով կարողանում են պատասխանել իրենց տրված հարցերին, լրացնել ու շտկել ընկերների

պատասխանները, ձևակերպել պարզ կառուցվածք ունեցող հարցական նախադասությունները:

Բավականին զարգացած է նաև դպրոց ընդունվող երեխայի խոսքի կառուցվածքը, նրանց մի մասը կարողանում է խոսքով օգտագործել նույնիսկ բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասություններ:

Երեխաների խոսքում գերակշռում են գոյականները, բայերը, նրանք ավելի քիչ են օգտագործում ածականներ, թվականներ, գրեթե չեն օգտագործում մակբայները և այլն:

ԳԼՈՒԽ 2

Ուսուցիչների հարցաթերթիկից ստացվող արդյունքների վերլուծություն

Կապված վաղ ուսուցման հետ, գրաճանաչության կազմակերպման որոշ խնդիրներ ավելի ու ավելի ակնհայտ են դառնում, այդ թվում՝ կարդալու կարողության ձևավորման դժվարությունները:

Հիմք ընդունելով կարդալու կարողության ձևավորման ընթացքում ձևավորված դժվարությունները ժամանակին հաղթահարելու կարևորությունը տարրական դասարաններում՝ փորձել ենք ուսուցիչների շրջանում հարցախույզի՝ հարցաթերթիկի միջոցով պարզել, թե ի՛նչ արդյունավետ միջոցներ կարելի է կիրառել վաղ ուսուցման պայմաններում գրճանաչության կազմակերպման խնդիրների լուծման նպա- տակով:

Դիտարկենք հարցման արդյունքները:

Առաջին՝ **<<Ինչպե՞ս կազմակերպել 6 տարեկան երեխաների ուսումնական գործընթացը>>** հարցին 9 (90%) ուսուցիչ նշել է՝«ուսուցում, խաղ, աշխատանք» սկզբունքով, իսկ 1-ը (10%) նշել է ուսուցչակենտրոն ուսուցում:

Տրված պատասխանները մեզ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ այսօրվա դպրոցում ուսուցում, խաղ, աշխատանք սկզբունքը, ուսումնական գործընթացիկարևոր նախապայմաններից մեկն է:

Երկրորդ՝ **<<Ձեր կարծիքով՝ ուսումնական գործընթացը ո՞ր դեպքում առավելագույն արդյունավետության կարող է հասնել>>** հարցին 10 (100%) ուսուցիչներն էլ նշել են,որ եթե երեխան իրեն զգա ապահով, կարողանա ազատ մտածել և արտահայտվել, վայելի սեր բարյացակամ մթնոլորտ, ապա ուսումնական գործընթացում կգրանցվեն մեծ հաջողություններ: Այս հարցրին տրված պատասխանների վերլուծությունը մեզ թույլ տվեց ավելի համոզվելու, որ ուսուցման գործընթացում առաջին գործոնը, որ պետք է զգա երեխան, սերն է և իրեն տրվող <<ազատությունը>>:

Եթե երեխան իրեն զգա ապահով, կարողանա ազատ մտածել և արտահայտվել, վայելի սեր բարյացակամ մթնոլորտ, ապա ուսումնական գործընթացում կգրանցվեն մեծ հաջողություններ:

Այս հարցրին տրված պատասխանների վերլուծությունը մեզ թույլ տվեց ավելի համոզվելու, որ ուսուցման գործընթացում առաջին գործոնը, որ պետք է զգա երեխան, սերն է և իրեն տրվող <<ազատությունը>>:

Երրորդ՝ **<<Երեխան ուսուցման ո՞ր փուլում է բախվում կարդալու կարողությունների ձևավորման դժվարություններին>>** հարցին 5 (50%) ուսուցիչ նշել է՝ այբբենական, 1 (10%) ուսուցիչ՝ հետայբբենական, 4 (40%) ուսուցիչ՝ բոլոր փուլերում:

Երեխան կարդալու կարողության դժվարություններին բախվում է սկսած այբբենական փուլից, եթե չձեռնարկվեն համապատասխան գործողություններ, ապա խնդիրը կխորանա և դրանց հաղթահարումն էլ ավելի կդժվարանա՝ խաթարելով ու դժվարացնելով նաև ուսումնական մյուս գործընթացները:

Չորրորդ՝ **<<Ձեր կարծիքով անհրաժե՞շտ է անհատական աշխատանք տանել այն աշակերտի հետ, որոնք ունեն դժվարություններ կարդալու կարողության ձևավորման փուլում, թե՞ այդ դժվարությունը կապված է վաղ տարիքի հետ>>** հարցին 2 (20%) ուսուցիչ պատասխանել է, որ բոլորովին էլ կարևոր չէ, որ դասարանի բոլոր աշակերտները կարդան սահուն և առանց դժվարությունների, իսկ 8 (80%) ուսուցիչ պատասխանել են, որ անհրաժեշտ է և նույնիսկ պարտադիր անհատական աշխատանք տանել կարդալու կարողության ձևավորման դժվարություններ ունեցող երեխայի հետ, տարիքն այս դեպքում խոչընդոտ չի, քանի որ այդ տարիքի երեխան լիովին պատրաստ է դպրոց գնալուն: Տրված պատասխաններից մեզ պարզ դարձավ, որ անհատական աշխատանքը ոչ միայն անհրաժեշտ է այլ նաև պարտադիր, եթե դպրոց ընդունվելու մեկնարկային տարիքը համարվում է 6 տարեկանը, ապա դժվարություն ունեցող երեխային անհրա- ժեշտ է ժամանակին օգնություն ցուցաբերել, որպեսզի այն չխոչընդոտի կարդալու կարո- ղության ձևավորմանը, ընդ որում՝ աշխատանները պետք է կազմակերպել մեթոդական ճիշտ հնարների միջոցով:

Հինգերորդ՝ **<<Ձեր կարծիքով ե՞րբ է անհրաժեշտ սկսել աշխատանքը կարդալու**

տարրական կարողությունների ձևավորման դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ>> հարցին 3 (30%) ուսուցիչ պատասխանել է՝ այբբենական շրջանից սկսած, 1-ը՝ (10%) տառերը վարժ սերտելուն հաջորդող փուլում, 1-ը (10%)՝ այն պահից սկսած, երբ երեխայի մոտ նկատվում է կարդալու դժվարություններ, 5-ը՝ (50%) պատասխանել է, որ աշխատանքը պետք է սկսել այբբենական շրջանում, հենց առաջին մի քանի տառը անցնելուն պես Հենց սկզբից պետք է կարդալու վարժություններ կատարել՝ երեխաներին հանձնարարելով կարդալ արդեն ծանոթ հնչյուն-տառերով կազմված կապակցությունները կամ բառերը: Այդ աշխատանքը պետք է շարունակել անընդհատ՝ ավելացնելով նոր ուսուցանված տառերը:

Հարցին տրված պատասխանների վերլուծությունը և մեր աշխատանքային փորձը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ երեխան գրված /ոչ գծապատկերներով տրված/ բառերը կամ տեքստը սկսում է կարդալ այբբենական շրջանից, որն էլ նշանակում է, որ կարդալու տարրական կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքը անհրաժեշտ է սկսել այբբենական շրջանից, ամեն օր և յուրաքանչյուր դասի՝ բացահայտելով յուրաքանչյուր աշակերտի դժվարությունները և կարդալու համապատասխան առաջադրանքներով փորձելով հաղթահարել խնդիրը հենց սկզբից:

Վեցերորդ՝ **<<Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ ուղիներ կարելի է գտնել կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունները հաղթահարելու համար>>** հարցին բոլոր ուսուցիչները՝ 10-ը (100%), պատասխանել են, որ կարելի է երկու, երք տառ համադրել, տպել, որպեսզի երեխան կարդա, արդյունքում երեխայի մտապատկերներում կձևավորվի հիշողություն, կարդալու ամենափոքր միավոր կընդունի վանկը և բառերը կկարդա վանկերով:

Կարդալու կարողության ձևավորման համար երեխան պետք է հստակորեն ճանաչի տառը, կարողանա այն վերածել համապատասխան հնչյունի, համակցել հնչյունները իրար հետ, միավորել դրանք վանկի և բառի մեջ և բառը կարդալ ամբողջական:

Յոթերորդ՝ **<<Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ խաղ-վարժանքները կարդալու կարողության ձևավորման դժվարությունների հաղթահարման գործընթացում>>** հարցին 2 (20%) ուսուցիչ պատասխանել է՝ դրական, 2 (20%) ուսուցիչ պատասխանել է մեծ և կարևոր, իսկ 6 (60%) ուսուցիչներ պատասխանել են, որ եթե խաղ-վարժանքները մեթոդական գիտական սկզբունքների հիման վրա լազմված լինեն, ապա անպայման արդյունավետ կլինեն:Հնչած պատասխաններից պարզ դարձավ, որ խաղ-վարժանքները ինքնանպատակ չեն, ուղղված են կարդալու կարողությունների զարգացմանը, ունենում են դրական ազդեցություն և երեխաները խաղերի միջոցով ավելի հեշտ են ընկալում նյութը: Հարցման արդյունքները մեր փորձի հետ համադրելով՝ կարող ենք պնդել, որ ճիշտ կազմված և աշակերտի համապատասխան դժվարությունը հաղթահարելուն ուղղված վարժությունները մեծապես նպաստում են կարդալու կարողության ձևավորման ընթացքում ծագած դժվարությունների հաղթահարմանը

Ութերորդ՝ **<<Կարդալու կարողությունների ձևավորման դժվարություններ ունեցող երեխաների հետ ե՞րբ է արդյունավետ աշխատել>>** հարցին ուսուցիչներից 2-ը (20%) պատասխանել է՝ դասաժամին, 3 (30%) ուսուցիչ՝ խմբային, իսկ 5 (50%)-ը պատասխանել է անհատապես:

Հարցման արդյունքները. դժվարություն ունեցող երեխայի հետ արդյունավետ է աշխատել անհատապես՝ օգտագործելով տարբեր գործիքակազմ, եկան հիմնավորելու մեր անձնական փորձի՝ աշակերտների հետ իրականացրած անհատական աշխատանքների արդյունքները, այն է՝ կարդալու կարողության դժվարություն ունեցող աշակերտի հետ ավելի արդյունավետ է աշխատել անհատապես՝ հաշվի առնելով նրա անհատական դժվարություններն ու կարողությունները և աշխատելու անհատական ռիթմը և ուշադրությունը կենտրոնացնելով միայն նրա վրա:

Իններորդ՝ **<<Ի՞նչ հաճախականությամբ պետք է աշխատել կարդալու կարողության ձևավորման դժվարություններ ունեցող երեխաների հետ՝ սպասելիք արդյունքին հասնելու համար>>** հարցին բոլոր ուսուցիչները պատասխանել են, որ տարվող աշխատանքների հաճախականությունը կախված է երեխայի՝ կարդալու դժվարության աստիճանից և առաջադրանքների ճիշտ և արդյունավետ ընտրությունից:

Պատասխանների արդյունքների վերլուծությունը հնարավորություն տվեց եզրակացնելու, որ կարալու դժվարություն ունեցող երեխայի հետ աշխատել պետք է այնքան, որքան անհրաժեշտ է արդյունքի հասնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ընտրել գիտականորեն հիմնավորված ճիշտ առաջադրանքներ՝ հաշվի առնելով դժվարության բնույթը, մեթոդական ճիշտ, բայց երբեմն նաև՝ բազմազան հնարներ և պահպանելով հեշտից դժվարն ընթացող սկզբունքը:

Տասներորդ՝ **<<Դժվարության հաղթահարումից հետո ինպիսի՞ աշխատանք արդյունավետ կլինի ուսուցումն իրականացնել>>** հարցին 3 (30%) ուսուցիչ պատասխանել է՝ տնային ուսուցում, իսկ 7 (70%) ուսուցիչ պատասխանել է խմբովի կամ դասարանում: Փորձը ցույց է տվել, որ դժվարության հաղթահարումից հետո երեխան պատրաստ է դասարանական կոլեկտիվում մասնակցելու ուսումնական ակտիվ գործընթացին և ցուցաբերելու առաջադիմություն, սակայն մեր խորին համոզմամբ՝ կարդալու նախնական կարողության ձևավորումից հետո կարելի է և արդյունավետ կլինի աշխատել բոլոր հնարավոր ձևերով՝ ավելի զարգացնելու համար երեխայի մեջ կարդալու ձգտումը:

Այսպիսով՝ ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզի արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ կարդալու նախնական կարողության ընթացքում ծագած դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքները ճիշտ կլինի սկսել դրանց դրսևորման հենց սկզբից՝ հընթացս առաջադրելով համապատասխան խնդրի հաղթահարմանն ուղղված վարժություններ՝ խաղ-վարժանքներ, որոնք ցանկալի է, որ կազմված լինեն անհատական կարողությունների և կոնկրետ դժվարությունների բնույթի հաշվառմամ

1.Ինչպե՞ս կազմակերպել **6** տարեկան երեխաների ուսումնական գրծընթացը.



Ուսուցում՝ անտեսելով տարիքային ճգնաժամը

Ուսուցում, խաղ, աշխատանք

Ուսուցչակենտրոն ուսուցում

2.Ձեր կարծիքով՝ ուսումնական գործընթացը ո՞ր դեպքում արդյունավետության կարելի է հասնել:



Երեխան իրեն զգա ապահով, կարողանա ազատ մտածել և արտահայտվել, վայելի սեր, բարյացակամ մթնոլորտ.
Սահմանափակել երեխայի ազատ արտահայտվելու, կարծիք հայտնելու իրավունքը, անտեսել նրա նախասիրություններն ու տարիքային առանձնահատկությունները
Դասի ընթացքում չօգտագործել դիդակտիկ նյութեր, փոխարենն ասել երեխայի համար անհասկանալի բառեր, երկարաշունչ նախադասություններ.

4.Ձեր կարծիքով անհրաժե՞շտ է անհատական աշխատանք տանել այն աշակերտի հետ, որոնքունեն դժվարություններ կարդալու կարողության ձևավորման փուլում, թե՞ այդ դժվարությունը կապված է վաղ տարիքի հետ.



Երեխայի մեծանալու հետ խնդիրըհետզհետե կստանա լուծում, առանց անհատական աշխատանքի.

Բոլորովին էլ կարևոր չէ, որ դասարանի բոլոր աշակերտները պետք է կարդան սահուն և առանց դժվարությունների.

Անհրաժեշտ է և նույնիսկ պարտադիր, անհատական աշխատանք տանել կարդալու կարողության ձևավորման դժվարություններ ունեցող երեխայի հետ, տարիքն այս դեպքում խոչընդոտ չի, քանի որ այդ տարիքի երեխան լիովին պատրաստ է դպրոց գնալուն.

9.Ի՞նչ հաճախականությամբ է պետք աշխատել կարդալու կարողությունների ձևավորման դժվարություններ ունեցող երեխաների հետ, սպասելիք արդյունքին հասնելու համար:

Շաբաթվա յուրաքանչյուր օր

Կախված, երեխայի ունեցած դժվարությունից և տարվող աշխատանքի առաջադրանքների ճիշտ և արդյունավետ ընտրությունից

Շաբաթը երկու օր, մեկ տարի շարունակ



10. Դժվարության հաղթահարումից հետո արդյունավետ կլինի ուսուցումը իրականացնել:



Անհատական
Տնային ուսուցում
Խմբովի կամ դասարանում

Գրաճանաչության կազմակերպման խնդիրները վաղ ուսուցման պայմաններում արտահայտվում են տարբեր կերպ և տարբեր գործընթացներում: Այստեղ կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկությունները, ճանաչել երեխային, ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ աշակերտները առանց դժվարության ընդգրկվեն որոշակի ակտիվ գործունեության մեջ, և ձևավորեն անհրաժեշտ կարողություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը և մեր կողմից իրականացված անհատական աշխատանքները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

1.ուսումնասիրվող հիմնախնդիրն արդիական է, ունի տեսական և գործնական նշանակություն, սակայն ինչպես վկայում են գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունները և պրակտիկ դիտարկումները, վաղ ուսուցման պայմաններում երեխաների կարդալու նախնական կարողության ձևավորման դժվարությունների հաղթա- հարման համար այդ դժվարություններին համապատասխան՝ ուսուցման միջոցներն ու մեթոդները վերամշակման և կատարելագործման կարիք ունեն.

2. գրաճանաչության երեք փուլերն ունեն իրենց նպատակներն ու խնդիրները, որոնք փոխկապված և փոխպայմանավորված են. հատկապես կարդալու նախնական կարողության ձևավորման համար չափազանց կարևոր է հաշվի առնել այդ հաջոր-դայնությունը՝ յուրաքանչյուր փուլում իրականացնելով անհրաժեշտ և երաշխավորվող մեթոդական հանձնարարականները՝ բազմապիսի դժվարություններից խուսափելուկամ դրանք հեշտությամբ հաղթահարելու համար.

3. մեր կատարած հետազոտությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ զննականության սկզբունքով և վերլուծական-համադրական հնչույթաբառային մեթոդով կազմված խաղ-վարժանքները կարևոր ազդեցություն ունեն կարդալու նախնական կարողության ձևավորման գործընթացում. հատկապես արդյունավետ են եղել հետևյալ եղանակները՝

4. ա/ գույնով տարբերակված բառապատկերը նկատելու միջոցով ամբողջական բառի միանգամից ընթերցումը,

բ/ նույն արմատն ունեցող բառերով բառաշարքերի ընթերցումը,

գ/ տրված առանձին արմատների միացումով ստացված բառերի ընթերցումը,

դ/ երկտառ ձայնավորներ՝ է(ե), օ(ո), և երկհնչյուն տառեր՝ ե, ո, ունեցող բառերով զուգադրված բառազույգերի ընթերցումը,

ե/ երկշարք և եռաշարք բաղաձայնների իմաստազատիչ արժեքի գիտակցմանհնարավորություն պարունակող բառազույգերի ու բառաշարքերի ընթերցումը,

զ/ բառակապակցությունների ընթերցումը /հասկանալով կարդալուն նպաստող/,

է/ երկշարք և եռաշարք բաղաձայններ պարունակով բառերի տեղադրում նախադասության մեջ և ընթերցում /հասկանալով կարդալուն նպաստող/ և այլն:

5. Կարդալու կարողության ձևավորման դժվարությունները առաջ են գալիս սկսած այբբենական շրջանից: Սակայն հենց այդ ժամանակ էլ պետք է կատարվեն աշխատանքներ ստեղծված դժվարության հաղթահարման համար՝ ուշադրություն դարձնելով կարդալու մեխանիզմի ճիշտ ձևավորմանը: Աշակերտը պետք է սովորի կարդալ սահուն և հասկանալով, այլապես կկորցնի հետաքրքրությունը կարդալու նկատմամբ:

Առաջարկություններ

1. Կարևոր ենք համարում մասնագիտական գրականության մեջ և մայրենիի դասավանդման մեթոդիկային նվիրված հոդվածներում վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության կազմակերպման խնդիրներին և հատկապես դժվարությունների հաղթահարմանը մանրամասն վերլուծություններով անդրադառնալը:

2. Կարծում ենք, որ կարելի է կատարել փորձի փոխանակում կարդալու կարողության ձևավորման դժվարությունների տարբեր դեպքերի և իրավիճակների համար, ծանոթանալ կիրառված մեթոդներին և ստացված արդյունքներին, ստեղծել հաջողված վերլուծությունների, աշխատանքային քարտերի և տեսագրությունների բանկ, դրանք քննարկել աշխատանքային կոլեկտիվի և դասախոսների հետ/նաև առցանցհարթակներում/:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ.,Աղբյուր, դասագիրք-տետրնախադպրոցականների համար, Երևան, 2010, 160 էջ:
2. Բալայան Ա., 100 խաղ դպրոցականների համար, Եր., Զանգակ – 97, 2005:
3. Բալայան Ա., Հնչյունային լսողությունը զարգացնող քարտեր, Հր., Գայանե-Էդ –Յուր, 2011:
4. Բալայան Ա., Մկրտչյան Ս., Ամառային տետր. շուտով կգնամ 2-րդ դասարան: Եր.,Զանգակ 2014:
5. Բալայան Ա., 200 խաղ, Եր., Զանգակ, 2014:
6. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գիրք – տետր 1, Եր.,Էդիթ Պրինտ, 2009:
7. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գրական ունկնդրում նախոսք. 1-ին դասարան, Եր., Էդիթ Պրինտ, 2012, 2018:
8. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
9. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
10. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, Զանգակ, 2013:
11. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Գործնական աշխատանքներ մայրենիից:Տարրական դասարաններ, Նարեկ հրատ., 2013:
12. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ուսուցանող գրավոր աշխատանքներ. 1 – 2-րդդասարաններ, Զանգակ, 2015:
13. Թոփուզյան Ա. Օ, Գյուլամիրյան Ջ. Հ., Պողոսյան Լ. Մ., Ասատրյան Ս. Մ., Անտոնյան Լ. Ա., Ղազարյան Մ. Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների նծնողների համար, Երևան 2018:
14. Խարազյան Ռ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրականդասարաններում, Երևան, 2002:
15. Տեր-Գրիգորյան Ա.Ե, Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս հրատարակչություն,

Երևան1980:

16. Տեր-Գրիգորյան Լ., Գալստյան Ա., Ուղղագրական բառգրքույկ, Երևան, 2012, 144էջ:
17. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Երևան, 2006-2013, 123 էջ:
18. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2006-2014, 64 էջ:
19. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Իմ օգնական 1,Երևան, 2008, 32 էջ
20. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Սովորի՛ր գրել. աշխատանքային տետր N 1, 2, 3,4, Երևան, 2012, յուր. 30 էջ: